



ՀՖՖ ՆԱԽԱԳԱՀԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2008/2009թթ-երի ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՄՐՑԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

ք.Երևան

16 նոյեմբերի 2007թ.

Հարգելի տիկնայք եւ պարոնայք

Այս հայտարարությամբ Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիան սկսում է իր ակումբների արտոնագրման համակարգի նոր՝ թվով 5-րդ մրցաշրջանի աշխատանքները, որոնք վերաբերում են ՈՒԵՖԱ-ի 2008/2009թթ-երի, իսկ ՀՖՖ-ի 2008թ-ի մրցաշրջանին:

Ինչպես եւ նախորդ մրցաշրջաններում, այս մեկում նույնպես արտոնագրային ընթացակարգերն անցնելու են ՀՀ բարձրագույն խմբի բոլոր թիմերի մայր-ակումբները: Մակայն, ի տարբերություն նախորդ տարիների, այս մեկում արտոնագրված լինելը կենսական կարեւորություն ունի ոչ միայն գալիք տարի ՈՒԵՖԱ-ի պաշտոնական ակումբային մրցաշարերին մասնակցելու հավակնություն ունեցող ակումբների, այլեւ 2008թ-ի բարձրագույն խմբի առաջնության բոլոր մասնակիցների համար, քանի որ այսուհետեւ միմիայն արտոնագրված ակումբներին կընձեռվի հնարավորություն հանդես գալու ազգային եւ միջազգային ասպարեզներում: Կարելի է ասել, որ սկսվում է ակումբների արտոնագրման համակարգի 2-րդ փուլը:

Այդ կապակցությամբ եւ կցանկանայի իմ խորին շնորհակալությունը հայտնել այն անձանց, ովքեր մասնակցեցին ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի 1-ին դժվարին փուլի իրականացման աշխատանքներին:

ՀՖՖ-ն դժվարին ճանապարհ անցավ մինչ այս օրվան եւ այս որոշմանը հասնելը. թերահավատությունից մինչեւ սեփական ուժերի նկատմամբ վստահության ձեռքբերում, գուտ տեսական թերի գիտելիքներից մինչեւ գործնական զգալի փորձի ձեռքբերում, ակումբների գործունեության տոտալ վերահսկման եւ սահմանափակման վախից մինչեւ փոխշահավետ համագործակցություն եւ միմյանց գործունեության լավ ճանաչում եւ այլն:

Ահա սա է այն ուղին, որ անցել է ՀՖՖ-ն՝ իրականացնելով ՈԻԵՖԱ-ի կողմից նախաձեռնած ակումբների արտոնագրման համակարգի նախագծի դրույթները: Հենց սա է մեզ պարտադրում հնարավորինս աչալուրջ մոտենալ նոր մրցաշրջանին եւ դրա կողմից ներկայացվող մարտահրավերներին:

Արտոնագրային նոր փուլի նախաշեմին տեղի ունեցավ 2 իրադարձություն, որոնք թույլ են տալիս հուսալ, որ աշխատանքները կընթանան բնականոն հունով:

Նախ, հոկտեմբերի 19-ին կայացած հավաստագրային ստուգման ընթացքում, որն իրականացվեց աշխարհահռչակ շվեյցարական “SGS” ընկերության կողմից, պարզ դարձավ, որ ՀՖՖ Արտոնագրման բաժնի եւ համակարգի գործունեությունը գտնվում է բարձր մակարդակի վրա եւ համապատասխանում է ներկայացվող բոլոր միջազգային ստանդարտներին: Դրա արդյունքում մոտ օրերս ՀՖՖ Արտոնագրման բաժինը կարժանանա ծառայությունների մատուցման որակի միջազգային հավաստագրի:

Երկրորդը, հոկտեմբերի 25-ին ՈԻԵՖԱ-ի կողմից հաստատվեց ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի նոր Ուղեցույցը (Տարբերակ 3.0): Իհարկե, նախորդ տարի հաստատված Ուղեցույցի 2-րդ տարբերակի ձեւափոխումը կրում էր որոշակիորեն ՈԻԵՖԱ-ի կողմից պարտադրված բնույթ, ինչի արդյունքում նոր Ուղեցույցը այժմ ներկայանում է որոշակիորեն բարդեցված պահանջներով (հիմնականում ֆինանսական բնագավառում): Հաշվի առնելով վերոհիշյալը՝ ես դիմում եմ արտոնագրված ակումբների ղեկավարներին՝ ամենայն պատասխանատվությամբ մոտենալ նոր Ուղեցույցի պահանջներին եւ կատարվելիք աշխատանքների որակին ու ժամկետներին:

Կարիք չկա նշել, որ բոլոր ակումբները կարող են ակնկալել ՀՖՖ Արտոնագրման բաժնի մասնագետների բազմակողմանի օժանդակությունն՝ արտոնագրման համակարգի պահանջների իրականացման հարցում, քանի որ դա կազմում է ակումբների արտոնագրման համակարգի նկատմամբ Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիայի ղեկավարության կողմից տարվող քաղաքականության մաս, այն է՝

- արտոնագրման համակարգի նկատմամբ ակումբների կարիքների եւ ակնկալիքների բավարարում
- ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի արդյունավետության մշտական բարելավում
- ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի աշխատակցի Վարքագծի Կանոնագրքի դրույթների անշեղորեն պահպանում
- ՀՀ օրենսդրության, ՖԻՖԱ-ի, ՈԻԵՖԱ-ի եւ ՀՖՖ-ի կանոնների անշեղորեն պահպանում

Տարվող այս քաղաքականության շրջանակներում ՀՖՖ-ն դնում է հետեւյալ նպատակային խնդիրներն իր Արտոնագրման բաժնի եւ համակարգի առջեւ.

- բազմակողմանի օժանդակում արտոնագրվող ակումբներին՝ ՀՖՖ նոր Ուղեցույցի (Տարբերակ 3.0) պահանջների կատարման հարցում, ինչը թույլ կտա նրանց մասնակցել ինչպես 2008թ-ի ՀՀ բարձրագույն խմբի առաջնությանը, այնպես էլ ՈՒԵՖԱ-ի 2008/2009թթ-երի մրցաշրջանի պաշտոնական ակումբային մրցաշարերին;
- ՈՒԵՖԱ-ի որակի Ստանդարտի (Տարբերակ 2.0) պահանջների անշեղորեն կատարում, ինչը 2008թ-ին թույլ կտա կրկին հաջողությամբ անցնել “SGS” ընկերության կողմից իրականացվող ստուգումը;
- համագործակցություն ՀՖՖ Ուսումնամեթոդական բաժնի հետ՝ Հայաստանում համաեվրոպական մարզչական կոնվենցիայի դրույթների իրականացման հարցում;
- նախապատրաստական աշխատանքների իրականացում՝ 2009թ-ին աշխատանքներն ամբողջովին ISO-9001:2000 միջազգային ստանդարտին համապատասխանեցնելու համար, ինչը թույլ կտա ավելի բարձրացնել Հայկական Ֆուտբոլի վարկանիշը Եվրոպայում;
- ՀՀ ֆուտբոլային մարզակառույցների արդիականացում, ինչը կդարձնի դրանք հնարավորինս հարմարավետ եւ անվտանգ;
- ԶԼՄ-ներում արտոնագրման համակարգի, նրա խնդիրների եւ նպատակների ավելի լայնածավալ լուսաբանում՝ այն ավելի հասկանալի դարձնելու համար ֆուտբոլային հանրությանը;
- աշխատանքների լիակատար վերահսկում, դրանց մշտական բարելավում եւ անհրաժեշտ փոփոխությունների կիրառում՝ համակարգի բնականոն եւ անխափան աշխատանքն ապահովելու համար:

Նախորդ մրցաշրջանի նախօրեին թողարկված ծրագրային հայտարարությունում եւ արդեն նշել էի, որ չնայած որոշ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ բարդությունների, մենք կարողացանք ստեղծել եւ զարգացնել ակումբների արտոնագրման համակարգը՝ դարձնելով այն լիարժեք գործող մարմին:

Այսօր եւ կոչ եմ անում համակարգ ներգրավված երկու կողմերին՝ արտոնագրողներին եւ ակումբներին, անել հնարավորինս համակարգի կատարելագործման եւ հետագա զարգացման համար:

ՀՖՖ Նախագահ

Ռ. Հայրապետյան